Baker Tilly Armenia CJSC
22 Hanrapetutyan Street
0010 Yerevan, Republic of Armenia
Tel: +374(10) 544-301
Tel: +374(10) 544-307/309
Fax: +374(10) 562-404
Email: info@bakertillyarmenia.com
www.bakertilly.am

30.06.2022թ.
N 032209

*ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ*

*Բեյքեր Թիլլի Արմենիա ՓԲԸ*
*Գլխավոր տնօրեն*

______________ Փ.Գևորգյան

Աուդիտորական ծառայությունների իրականացման
Լիցենզիա թիվ ԱԾ- 054՝ տրված ՀՀ ֆինանսների
և էկոնոմիկայի նախարարության կողմից

# ԱՆԿԱԽ ԱՈւԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«ՄԻՍ ՆԱՏՈՒՐԱԼ» Փակ Բաժնետիրական Ընկերության Բաժնետերերին**

*Կարծիք*

Մեր կողմից իրականացվել է «Միս Նատուրալ» ՓԲԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որը ներառում է 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

*Կարծիքի հիմք*

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

*Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-երի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Ընկերությունը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածներից:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումերից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այս ֆինանսնական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք:

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Ընկերության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր

եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, աուդիտորը չի կարող երաշխավորել, որ ապագա իրադարձությունները կամ հանգամանքները չեն կարող հանգեցնել նրան, որ Ընկերությունը կկորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

- Ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ Ընկերության ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատվություն ենք կրում աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկման ու կատարման համար: Մենք լիովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Աուդիտոր

Մ.Պոնամարևա

30.06.2022թ.

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
31 դեկտեմբերի 2021թ-ի դրությամբ

*(հազար դրամ)*

| | *Ծանոթա-գրություն* | 2021թ. | 2020թ. |
|---|---|---|---|
| Ակտիվներ | | | |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | | |
| Հիմնական միջոցներ | 4 | 842,516 | 793,123 |
| Ոչ նյութական ակտիվներ | 5 | 13,275 | 13,011 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | | 855,791 | 806,134 |
| **Ընթացիկ ակտիվներ** | | | |
| Պաշարներ | 6 | 1,433,970 | 1,169,930 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 7 | 1,652,204 | 726,122 |
| Տրամադրված փոխառություններ | | - | 28,872 |
| Մնացորդներ դրամարկղում և բանկերում | 8 | 25,907 | 20,554 |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | | 3,112,081 | 1,945,478 |
| Ընդամենը ակտիվներ | | 3,967,872 | 2,751,612 |
| Սեփական կապիտալ և պարտավորություններ | | | |
| Սեփական կապիտալ | | | |
| Բաժնետիրական կապիտալ | 9 | 475,314 | 475,314 |
| ՀՄ վերագնահատման պահուստ | | 169,565 | 173,857 |
| Կուտակված շահույթ/(վնաս) | | 142,232 | (191,920) |
| Էմիսիոն եկամուտ | 10 | - | 91,181 |
| Պահուստային կապիտալ | | 4,728 | 4,728 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | 791,839 | 553,160 |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Վարկեր և փոխառություններ | 11 | 719,698 | 696,510 |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | | 14,049 | - |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 12 | 23,675 | 24,063 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** | | 757,422 | 720,573 |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Վարկեր և փոխառություններ | 11 | 1,151,578 | 789,477 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 13 | 1,185,802 | 680,725 |
| Շահութահարկի գծով պարտավորություն | | 81,231 | 7,677 |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | | 2,418,611 | 1,477,879 |
| Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ | | 3,967,872 | 2,751,612 |

Հակոբյան Արմեն

Տնօրեն

30.06.2022թ.

1-27 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

## ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ և ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2021թ. ավարտված տարվա համար

*(հազար դրամ)*

| | *Ծանոթա-գրություն* | 2021թ. | 2020թ. |
|---|---|---|---|
| Հասույթ | 14 | 4,827,233 | 2,622,988 |
| Վաճառքի ինքնարժեք | 15 | (3,404,456) | (1,897,173) |
| **Համախառն շահույթ** | | 1,422,777 | 725,815 |
| Իրացման ծախսեր | 16 | (658,846) | (431,481) |
| Վարչական ծախսեր | 17 | (202,300) | (106,274) |
| Այլ եկամուտ | 18 | 62,430 | 28,843 |
| Այլ ծախսեր | 19 | (51,493) | (43,072) |
| **Գործառնական շահույթ** | | 572,568 | 173,831 |
| Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս) | | 2,893 | (15,312) |
| Ֆինանսական ծախս, զուտ | 20 | (135,458) | (122,120) |
| **Շահույթ մինչև հարկումը** | | 440,003 | 36,399 |
| Շահութահարկի գծով ծախս | 21 | (87,404) | (5,476) |
| **Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո** | | 352,599 | 30,923 |
| **Այլ համապարփակ եկամուտ** | | | |
| Այլ համապարփակ արդյունք | | - | - |
| **Ընդամենը համապարփակ արդյունք** | | 352,599 | 30,923 |

1-27 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

# ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

*(հազար դրամ)*

| | Բաժնետիրական կապիտալ | Էմիսիոն եկամուտ | Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ | Պահուստային կապիտալ | Կուտակված շահույթ(վնաս) | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| Մնացորդը առ 1 հունվարի 2020թ. | 435,269 | 91,181 | 178,148 | 4,728 | (227,134) | 482,192 |
| *Համապարփակ եկամուտ* | | | | | | |
| Տարվա շահույթ | - | - | - | - | 30,923 | 30,923 |
| Ընդամենը համապարփակ եկամուտ | - | - | - | - | 30,923 | 30,923 |
| Փոխանցում չբաշխված շահույթին | - | - | (4,291) | - | 4,291 | - |
| ***Կապիտալում ուղղակիորեն գրանցված գործարքներ սեփականատերերի հետ*** | | | | | | |
| Բաժնետիրական կապիտալի համալրում | 40,045 | - | - | - | - | 40,045 |
| Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ | 40,045 | - | - | - | - | 40,045 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.** | 475,314 | 91,181 | 173,857 | 4,728 | (191,920) | 553,160 |
| Մնացորդը առ 1 հունվարի 2021թ. | 475,314 | 91,181 | 173,857 | 4,728 | (191,920) | 553,160 |
| *Համապարփակ եկամուտ* | | | | | | |
| Տարվա շահույթ | - | - | - | - | 352,599 | 352,599 |
| Ընդամենը համապարփակ եկամուտ | - | - | - | - | 352,599 | 352,599 |
| Փոխանցում չբաշխված շահույթին | - | - | (4,292) | | 4,292 | - |
| ***Կապիտալում ուղղակիորեն գրանցված գործարքներ սեփականատերերի հետ*** | | | | | | |
| Բաժնետոմսերի հետգնման արդյունքում էմիսիոն եկամտի մարում | - | (91,181) | - | - | - | (91,181) |
| Բաժնետոմսերի հետգնման վնաս | - | - | - | - | (22,739) | (22,739) |
| Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ | - | (91,181) | - | - | (22,739) | (232,751) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.** | 475,314 | - | 169,565 | 4,728 | 142,232 | 791,839 |

1-27 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

## ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

*(հազար դրամ)*

| | 2021թ. | 2020թ. |
|---|---|---|
| Հաշվետու տարվա զուտ արդյունք | 352,599 | 30,923 |
| Ճշգրտումներ | | |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 67,913 | 61,095 |
| Հիմնական միջոցների օտարում | - | 4,020 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստին հատկացում, դեբիտորական պարտքերի դուրսգրում | 18,926 | 1,282 |
| Կրեդիտորական պարտքերի դուսգրում | (13,955) | - |
| Պաշարների դուրսգրում | 21,276 | 19,745 |
| Շահութահարկի գծով ծախս | 87,404 | 5,476 |
| Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/ վնաս | (2,893) | 15,312 |
| Շնորհներից եկամուտներ | (15,070) | - |
| Տոկոսային ծախսեր | 136,658 | 124,210 |
| Տոկոսային եկամուտներ | (1,200) | (2,090) |
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր՝ մինչև շրջանառու կապիտալի փոփոխությունները** | **651,658** | **259,973** |
| **Փոփոխություններ** | | |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքերում | (922,911) | (68,507) |
| Պաշարներում | (285,316) | (316,278) |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերում | 413,262 | 57,687 |
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | **(143,307)** | **(67,125)** |
| Ստացված շնորհներ | 29,119 | - |
| Վճարված շահութահարկ | (14,238) | (1,004) |
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | **(128,426)** | **(68,129)** |
| **Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | (117,570) | (36,210) |
| Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր | 667 | 6,170 |
| Տրամադրված փոխառություններ | - | (21,253) |
| Ստացված տոկոսներ | 3 | 9 |
| **Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | **(116,900)** | **(51,284)** |
| **Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Վարկերի և փոխառությունների ստացում, զուտ | 438,625 | 100,109 |
| Տոկոսների վճարում | (123,295) | (120,412) |
| Բաժնետիրական կապիտալի համալրում | - | 40,045 |
| Բաժնետոմսերի հետգնում | (64,653) | - |
| **Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | **250,677** | **19,742** |
| Դրամական միջոցների զուտ աճ/(նվազում) | 5,351 | (99,671) |
| Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | 2 | (2,144) |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ | 20,554 | 122,369 |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ** | **25,907** | **20,554** |

1-27 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

## 4. Հիմնական միջոցներ

*(հազար դրամ)*

| | Շենքեր և կառուցվածքներ | Փոխանցող հարմարանքներ | Մեքենաներ և սարքավորումներ | Տրանսպորտային միջոցներ | Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ | Այլ հիմնական միջոցներ | Ֆինանսական վարձակալությամբ ստացված տրանսպորտային միջոցներ | Հողամասեր | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ակտիվի սկզբնական արժեք/ վերագնահատված արժեք | | | | | | | | | |
| 2020թ. հունվարի 1-ի դրությամբ | 602,693 | 8,118 | 322,893 | 41,020 | 7,902 | 191,725 | - | 85,900 | 1,260,251 |
| Ավելացում | - | - | 1,854 | 7,000 | - | 19,481 | 59,144 | - | 87,479 |
| Օտարում/Դուրսգրում | - | - | - | (3,473) | - | (3,772) | - | - | (7,245) |
| 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 602,693 | 8,118 | 324,747 | 44,547 | 7,902 | 207,434 | 59,144 | 85,900 | 1,340,485 |
| Ավելացում | - | - | 12,023 | 55,200 | - | 29,175 | 9,196 | 10,000 | 115,594 |
| Օտարում/Դուրսգրում | - | - | - | (4,482) | - | - | - | - | (4,482) |
| 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 602,693 | 8,118 | 336,770 | 95,265 | 7,902 | 236,609 | 68,340 | 95,900 | 1,451,597 |
| **Մաշվածություն** | | | | | | | | | |
| 2020թ. հունվարի 1-ի դրությամբ | 102,792 | 855 | 280,312 | 26,241 | 4,439 | 76,103 | - | - | 490,742 |
| Տարեկան մաշվածություն | 14,141 | 919 | 14,201 | 5,612 | 990 | 17,657 | 6,325 | - | 59,845 |
| Օտարում/Դուրսգրում | - | - | - | (3,125) | - | (100) | - | - | (3,225) |
| 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 116,933 | 1,774 | 294,513 | 28,728 | 5,429 | 93,660 | 6,325 | - | 547,362 |
| Տարեկան մաշվածություն | 14,141 | 920 | 14,421 | 7,037 | 687 | 20,992 | 8,003 | | 66,201 |
| Օտարում/Դուրսգրում | - | - | - | (4,482) | - | - | - | | (4,482) |
| 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 131,074 | 2,694 | 308,934 | 31,283 | 6,116 | 114,652 | 14,328 | - | 609,081 |
| **Զուտ հաշվեկշռային արժեք** | | | | | | | | | |
| **2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 485,760 | 6,344 | 30,234 | 15,819 | 2,473 | 113,774 | 52,819 | 85,900 | 793,123 |
| **2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 471,619 | 5,424 | 27,836 | 63,982 | 1,786 | 121,957 | 54,012 | 95,900 | 842,516 |

ՀՀ, ք. Երևան, գ. Հաղթանակ 1-ին փողոց, 1/7 հասցեում գտնվող արտադրամասը և հողամասը որպես գրավ ապահովում են Հայաստանում Գյուղական Տարածքների Տնտեսական Զարգացման Հիմնադրամի թիվ Փ 02/2012 փոխառության պայմանագրի կատարումը: Ընկերության տրանսպորտային միջոցների և արտադրական սարքավորումների մի մասը որպես գրավ ապահովում են 05.06.2020թ. «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի թիվ Վ050620 զլխավոր վարկային պայմանագրի կատարումը: Հաշվետու ժամանակաշրջանում << Ֆինանսական վարձակալությամբ ստացված տրանսպորտային միջոցներ>> հոդվածի ավելացումները դրանք կապիտալ բնույթի ծախսեր են:

## 5. Ոչ նյութական ակտիվներ

*(հազար դրամ)*

| | Համակարգչային ծրագրեր | Այլ ոչ նյութական ակտիվներ | Ընդամենը |
|---|---|---|---|
| **Սկզբնական արժեք** | | | |
| 2020թ. հունվարի 1-ի դրությամբ | 4,710 | 5,136 | 9,846 |
| Ավելացում | 250 | 6,814 | 7,064 |
| 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 4,960 | 11,950 | 16,910 |
| Ավելացում | - | 1,976 | 1,976 |
| 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 4,960 | 13,926 | 18,886 |
| **Ամորտիզացիա** | | | |
| 2020թ. հունվարի 1-ի դրությամբ | 2,059 | 590 | 2,649 |
| Տարեկան ամորտիզացիա | 438 | 812 | 1,250 |
| 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2,497 | 1,402 | 3,899 |
| Տարեկան ամորտիզացիա | 388 | 1,324 | 1,712 |
| 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2,885 | 2,726 | 5,611 |
| **Զուտ հաշվեկշռային արժեք** | | | |
| 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2,463 | 10,548 | 13,011 |
| 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2,075 | 11,200 | 13,275 |

## 6. Պաշարներ

*(հազար դրամ)*

| | 2021թ. | 2020թ. |
|---|---|---|
| Նյութեր | 601,995 | 413,307 |
| Անավարտ արտադրություն | 428,143 | 228,085 |
| Կիսապատրաստուքներ | 214,658 | 339,282 |
| Արտադրանք | 137,059 | 143,139 |
| Ապրանքներ ճանապարհին | 51,957 | 45,770 |
| Ապրանքներ | 158 | 347 |
| | 1,433,970 | 1,169,930 |

## 7. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

*(հազար դրամ)*

| | 2021թ. | 2020թ. |
|---|---|---|
| Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով | 1,345,027 | 647,009 |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 110,998 | 56,359 |
| Բաժնետերերից ստացման ենթակա գումարներ | 118,830 | - |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 77,644 | 18,638 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 7,857 | 12,268 |
| | 1,660,356 | 734,274 |
| Արժեզրկման պահուստ | (8,152) | (8,152) |
| | 1,652,204 | 726,122 |

Բաժնետերերից ստացման ենթակա գումարները դրանք տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց բաժնետերերի կողմից վճարման ենթակա գումարներն են: Տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց բաժնետերերը վճարել են 29․06․2022թ․:

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:
Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսները չեն հաշվարկվում:
Ծանոթագրությունում 23 ներկայացված են պարտքային ռիսկի վերլուծության վերաբերյալ բացահայտումները:

Տե՛ս ծանոթագրություն 23՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

## 8. Մնացորդներ դրամարկղում և բանկերում

*(հազար դրամ)*

| | 2021թ. | 2020թ. |
|---|---|---|
| Դրամական միջոցներ դրամարկղում | 997 | 8,176 |
| Բանկային մնացորդներ՝ դրամով | 17,721 | 7,159 |
| Բանկային մնացորդներ՝ արտարժույթով | 7,189 | 5,219 |
| | 25,907 | 20,554 |

## 9. Բաժնետիրական կապիտալ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետիրական կապիտալը կազմել է 475,313,748 ՀՀ դրամ:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝435,269,000 ՀՀ դրամ:

Բաժնետիրական կապիտալը բաղկացած է 1,092 ՀՀ դրամ անվանական արժեքով 435,269 հատ սովորական բաժնետոմսերից:

Ընկերության բաժնետերերն են՝

| Բաժնետեր | Հասցե, գտնվելու վայր | Բաժնետոմսերի քանակ | Մասնակցության չափը (%) |
|---|---|---|---|
| Հակոբյան Արմեն Իշխանի | ՀՀ, ք. Երևան, Ալիխանյան 10 | 95,554 | 21.952861 |
| Հակոբյան Դավիթ Արմենի | ՀՀ, ք. Երևան, Խաչատրյան 31-53 | 95,552 | 21.952402 |
| Բրդոտյան Հովսեփ Հակոբի | ՀՀ, ք. Երևան, Թումանյան 39 2□ բն 7 | 62,530 | 14.365829 |
| Բրդոտյան Հակոբ Հովսեփի | ՀՀ, ք. Երևան, Թումանյան 39 2□ բն 7 | 62,530 | 14.365829 |
| Հակոբյան Հասմիկ Իշխանի | ՀՀ, ք. Երևան, Ավետ Ավետիսյան տուն 16 | 59,552 | 13.681654 |
| Բոյախչյան Վահե Գագիկի | ՀՀ, ք. Երևան, Ավետ Ավետիսյան տուն 16 | 59,551 | 13.681425 |

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերեությունը հետ է գնել <<Հայաստանում Գյուղական Տարածքների Տնտեսական Զարգացման Հիմնադրամ>> բաժնետիրոջ բոլոր բաժնետոմսերը: Հետգնված բաժնետոմսերը տեղաբաշխվել են մնացած բոլոր բաժնետերերի միջև:

## 10. Էմիսիոն եկամուտ

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերեությունը հետ է գնել <<Հայաստանում Գյուղական Տարածքների Տնտեսական Զարգացման Հիմնադրամ>> բաժնետիրոջ բոլոր 108,819 հատ բաժնետոմսերը: Գործարքի գինը կազմել է 232,751 հազ. ՀՀ դրամ: Հետգնման արդյունքում էմիսիոն եկամուտը մարվել է:

## 11. Վարկեր և փոխառություններ

*(հազար դրամ)*

| | 2021թ. | 2020թ. |
|---|---|---|
| **Ոչ ընթացիկ** | | |
| Գրավով ապահովված բանկային վարկեր | 384,531 | 323,021 |
| Փոխառություն | 335,167 | 373,489 |
| | 719,698 | 696,510 |
| **Ընթացիկ** | | |
| Գրավով ապահովված բանկային վարկեր | 1,134,256 | 671,792 |
| Փոխառություն | 17,322 | 117,685 |
| | 1,151,578 | 789,477 |
| Ընդամենը վարկեր և փոխառություններ | 1,871,276 | 1,485,987 |

*Վարկերի և փոխառությունների պայմաններն ու ժամկետները ներկայացված են ստորև.*

*(հազար դրամ)*

| | Արժույթ | Մարման տարի | Անվանական տոկոսադրույք | 2021թ. | 2020թ. |
|---|---|---|---|---|---|
| Գրավով ապահովված բանկային վարկ (լիզինգ) | ՀՀ դրամ | 2/19/2025 | 9.00% | 43,799 | 55,240 |
| Գրավով ապահովված բանկային վարկ** | ՀՀ դրամ | 6/10/2022 | 11.40% | 16,314 | 55,467 |
| Գրավով ապահովված բանկային վարկ (վարկային գիծ) | ՀՀ դրամ | 6/4/2025 | 11.50% | 150,000 | 135,500 |
| Գրավով ապահովված բանկային վարկ (վարկային գիծ) | ԱՄՆ դոլար | 6/4/2025 | 8.00% | 104,000 | 86,693 |
| Գրավով ապահովված բանկային վարկ* | ՀՀ դրամ | 5/18/2022 | 13.15% | 28,775 | 169,694 |
| Գրավով ապահովված բանկային վարկ (վարկային գիծ) | Ռուբլի | 6/4/2025 | 12.00% | 141,017 | 155,653 |
| Գրավով ապահովված բանկային վարկ* | ՀՀ դրամ | 8/18/2022 | 11.40% | 42,058 | 105,144 |
| Գրավով ապահովված բանկային վարկ** | ՀՀ դրամ | 10/19/2023 | 11.40% | 42,778 | 66,111 |
| Գրավով ապահովված բանկային վարկ** | ՀՀ դրամ | 10/30/2023 | 11.40% | 61,399 | 94,890 |
| Գրավով ապահովված բանկային վարկ | ՀՀ դրամ | 6/1/2026 | 11.25% | 66,763 | 70,420 |
| Գրավով ապահովված բանկային վարկ* | ՀՀ դրամ | 30/12/2022 | 13.10% | 144,581 | - |
| Գրավով ապահովված բանկային վարկ | ՀՀ դրամ | 22/04/2022 | 12.00% | 100,000 | - |
| Գրավով ապահովված բանկային վարկ | ՀՀ դրամ | 6/5/2022 | 12.00% | 100,000 | - |
| Գրավով ապահովված բանկային վարկ | ՀՀ դրամ | 14/06/2022 | 12.00% | 200,000 | - |
| Գրավով ապահովված բանկային վարկ | Ռուբլի | 29/07/2022 | 11.00% | 183,676 | - |
| Գրավով ապահովված բանկային վարկ | Ռուբլի | 9/8/2022 | 12.60% | 69,083 | - |
| Գրավով ապահովված բանկային վարկ | ԱՄՆ դոլար | 29/08/2022 | 7.50% | 14,998 | - |
| Գրավով ապահովված փոխառություն կապակցված կողմից (Ծան 24) | ՀՀ դրամ | 12/15/2022 | 10.00% | 100,803 | 139,645 |
| Գրավով ապահովված փոխառություն կապակցված կողմից (Ծան 24) | ՀՀ դրամ | 4/22/2022 | 5.00% | 19,652 | 62,886 |
| Չապահովված փոխառություն կապակցված կողմից (Ծան 24) | ԱՄՆ դոլար | 8/23/2029 | 12.00% | - | 2,475 |
| Չապահովված փոխառություն կապակցված կողմից | ԱՄՆ դոլար | 6/19/2029 | 12.00% | 115,234 | 167,229 |
| Չապահովված փոխառություն կապակցված կողմից | ՀՀ դրամ | 8/21/2024 | 12.00% | 115,200 | 118,200 |
| Հաշվեգրված տոկոսներ | | | | 11,146 | 740 |
| | | | | 1,871,276 | 1,485,987 |

** Տոկոսը ամբողջությամբ սուբսիդավորվում է պետության կողմից:*

*** Տոկոսը մասամբ է սուբսիդավորվում պետության կողմից:*

## 12. Հետաձգված հարկային պարտավորություններ

*(հազար դրամ)*

| | 2021թ. | 2020թ. |
|---|---|---|
| Տարեսկզբի մնացորդ | (24,063) | (26,264) |
| Տարվա արդյունքում ճանաչված հետաձգված հարկ | 388 | 2,201 |
| Տարեվերջի մնացորդ | (23,675) | (24,063) |

2021թ. հետաձգված հարկի գծով կիրառելի դրույքաչափը կազմում է 18% (2020թ.՝ 18%):

*Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների շարժ.*

*(հազար դրամ)*

| | 2020 | Ֆինանսական արդյունքով ճանաչում | 2021 |
|---|---|---|---|
| Արժակուրդայինի պահուստ | 7,296 | (578) | 6,718 |
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 1,467 | - | 1,467 |
| **Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ** | 8,763 | (578) | 8,185 |
| Հիմնական միջոցներ | (32,826) | 966 | (31,860) |
| **Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն** | (32,826) | 966 | (31,860) |
| **Զուտ հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)** | (24,063) | 388 | (23,675) |

*(հազար դրամ)*

| | 2019 | Ֆինանսական արդյունքով ճանաչում | 2020 |
|---|---|---|---|
| Արժակուրդայինի պահուստ | 5,102 | 1,253 | 7,296 |
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 9,385 | (18) | 1,467 |
| **Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ** | 14,487 | 1,235 | 8,763 |
| Հիմնական միջոցներ | (37,114) | 966 | (32,826) |
| **Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն** | (37,114) | 966 | (32,826) |
| **Զուտ հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)** | (22,627) | 2,201 | (24,063) |

## 13. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

*(հազար դրամ)*

| | 2021թ. | 2020թ. |
|---|---|---|
| Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով | 61,615 | 37,443 |
| Կրեդիտորական պարտքեր ձեռքբերումների գծով | 701,270 | 566,466 |
| Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով | 24,704 | 13,052 |
| Չվճարված արձակուրդայինի և սոց. վճարի պահուստ | 37,324 | 40,531 |
| Ստացված կանխավճարներ | 192,791 | 23,226 |
| Պարտավորություն հետգնված բաժնետոմսերի դիմաց | 168,098 | - |
| Այլ ընթացիկ պարտավորություններ | - | 7 |
| | 1,185,802 | 680,725 |

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

Ընկերության արտարժութային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 23-ում:

## 14. Հասույթ

*(հազար դրամ)*

| | 2021թ. | 2020թ. |
|---|---|---|
| Արտադրանքի վաճառքից հասույթ | 4,671,365 | 2,568,614 |
| Ապրանքների վաճառքից հասույթ | 155,593 | 53,902 |
| Ծառայությունների մատուցումից հասույթ | 275 | 472 |
| | 4,827,233 | 2,622,988 |

## 15. Վաճառքի ինքնարժեք

*(հազար դրամ)*

| | 2021թ. | 2020թ. |
|---|---|---|
| Վաճառված արտադրանքի ինքնարժեք | 3,267,526 | 1,849,883 |
| Վաճառված ապրանքների ինքնարժեք | 136,930 | 47,290 |
| | 3,404,456 | 1,897,173 |

## 16. Իրացման ծախսեր

*(հազար դրամ)*

| | 2021թ. | 2020թ. |
|---|---|---|
| Հատուցումներ աշխատակիցներին | 170,390 | 92,361 |
| Բեռնափոխադրման ծախս | 271,081 | 128,108 |
| Վառելիքի ծախս | 32,922 | 30,723 |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 30,871 | 19,527 |
| Մարքեթինգի և գովազդի ծախսեր | 67,838 | 21,631 |
| Լիցենզիայի գծով ծախսեր | 1,226 | 2,453 |
| Այլ ծախսեր | 84,518 | 136,678 |
| | 658,846 | 431,481 |

## 17. Վարչական ծախսեր

*(հազար դրամ)*

| | 2021թ. | 2020թ. |
|---|---|---|
| Հատուցումներ աշխատակիցներին | 115,155 | 44,889 |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 2,264 | 2,352 |
| Գործուղման և ներկայացուցչական ծախսեր | 11,016 | 3,387 |
| Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր | 8,229 | 5,408 |
| Գրասենյակային և կոմունալ ծախսեր | 332 | 315 |
| Աուդիտի և խորհրդատվության ծախսեր | 28,671 | 11,416 |
| Բանկային ծառայության ծախսեր | 10,945 | 4,068 |
| Չփոխհատուցվող հարկեր | 5,963 | 6,091 |
| Այլ ծախսեր | 19,725 | 28,348 |
| | 202,300 | 106,274 |

## 18. Այլ եկամուտ

*(հազար դրամ)*

| | 2021թ. | 2020թ. |
|---|---|---|
| Նյութական վնասի փոխհատուցումից | 8,799 | - |
| Հիմն. միջոցների վաճառքներից (օտարումից) եկամուտներ | 667 | 6,170 |
| Անհատույց ստացված դրամական միջոցներ | 7,200 | 17,433 |
| Շնորհներից եկամուտներ | 15,070 | - |

| | 2021թ. | 2020թ. |
|---|---|---|
| Կրեդիտորական պարտքերի դուրսգրումից | 13,955 | - |
| Այլ եկամուտ | 16,739 | 5,240 |
| | 62,430 | 28,843 |

## 19. Այլ ծախսեր

*(հազար դրամ)*

| | 2021թ. | 2020թ. |
|---|---|---|
| Դեբիտորական պարտքերի արժեզրկում, դուսգրում | 18,926 | 1,282 |
| Պաշարների արժեզրկում և կորուստներ | 21,276 | 19,745 |
| Հիմնական միջոցների վաճառքների (օտարումների) ծախսեր | - | 4,020 |
| Անհատույց տրված ակտիվներ | - | 2,340 |
| Գործառնական այլ ծախսեր | 11,291 | 15,685 |
| | 51,493 | 43,072 |

## 20. Ֆինանսական ծախս, զուտ

*(հազար դրամ)*

| | 2021թ. | 2020թ. |
|---|---|---|
| **Ֆինանսական եկամուտ** | | |
| Տրված փոխառություններից տոկոսային եկամուտ | 1,197 | 2,081 |
| Բանկային հաշիվներից տոկոսային եկամուտներ | 3 | 9 |
| | 1,200 | 2,090 |
| **Ֆինանսական ծախս** | | |
| Վարկերից և փոխառություններից տոկոսային ծախսեր | (136,658) | (124,210) |
| | (136,658) | (124,210) |
| **Զուտ ֆինանսկան ծախս** | (135,458) | (122,120) |

## 21. Շահութահարկի գծով ծախս

*(հազար դրամ)*

| | 2021թ. | 2020թ. |
|---|---|---|
| Ընթացիկ հարկի գծով ծախս | 87,792 | 7,677 |
| Հետաձգված հարկի գծով փոխհատուցում | (388) | (2,201) |
| | 87,404 | 5,476 |

## 22. Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև

*Ֆինանսական ակտիվներ*

*(հազար դրամ)*

| | 2021թ. | 2020թ. |
|---|---|---|
| *Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ* | | |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 1,574,560 | 707,484 |
| Մնացորդներ բանկերում և դրամարկղում | 25,907 | 20,554 |
| Տրամադրված փոխառություններ | - | 28,872 |
| | 1,600,467 | 756,910 |

*Ֆինանսական պարտավորություններ*

| | 2021թ. | (հազար դրամ) 2020թ. |
|---|---|---|
| *Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ* | | |
| Վարկեր և փոխառություններ | 1,871,276 | 1,485,987 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 1,161,098 | 667,673 |
| | 3,032,374 | 2,153,660 |

| | 2021թ. | (հազար դրամ) 2020թ. |
|---|---|---|
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 1,455,730 | 707,484 |
| Ընթացիկ բանկային հաշիվներ | 24,910 | 12,378 |
| Տրամադրված փոխառություններ | - | 28,872 |
| | 1,480,640 | 748,734 |

## 23. Փոխկապակցված անձանց հետ կատարված գործարքներ

Ընկերության փոխկապակցված կողմերը ներառում են բաժնետերերը և հիմնական ղեկավար անձնակազմը: Ստորև ներկայացված են Ընկերության հետ փոխկապակցված անձանց հետ կատարված գործարքները:

| Գործարքներ | 2021թ. | (հազար դրամ) 2020թ. |
|---|---|---|
| *Բաժնետերեր* | | |
| Փոխառությունների ստացում | 25,500 | 115,984 |
| Հաշվեգրված տոկոսներ | 29,566 | 16,314 |
| Փոխառությունների մարում | (69,411) | (160,905) |
| Վճարված տոկոսներ | (29,566) | (16,314) |
| Աշխատավարձ և պարգևատրումներ | 55,260 | 4,882 |
| Վարձավճարներ | 4,950 | 5,400 |
| Վարձավճարների մարում | (4,950) | (5,400) |
| Կրեդիտորական պարտք նվազագույն եկամտաբերության գծով | - | 10,000 |
| Կրեդիտորական պարտքի մարում | - | (10,000) |
| Բաժնետիրական կապիտալի համալրում | - | 40,045 |

| Մնացորդներ | 2021թ. | (հազար դրամ) 2020թ. |
|---|---|---|
| *Բաժնետերեր* | | |
| Փոխառություններ | 230,434 | 205,746 |
| Տոկոսներ | - | 740 |
| Աշխատավարձ և պարգևատրումներ | 23,136 | 5,472 |

## 24. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած դեպքեր

2022թ. Ընկերությունը իրականացրել է 234,376 հատ բաժնետոմսերի թողարկում և տեղաբաշխում, ինչի արդյունքում բաժնետերերի կազմում և վերջիններիս բաժնեչափերում տեղի են ունեցել էական փոփոխություններ։

Բաժնետիրական կապիտալը բաղկացած է 1,092 ՀՀ դրամ անվանական արժեքով 669,645 հատ սովորական բաժնետոմսերից։

Ընկերության բաժնետերերն են՝

| Բաժնետեր | Հասցե, գտնվելու վայր | Բաժնետոմսերի քանակ | Բաժնեչափ (%) |
|---|---|---|---|
| ԵՄ-Հայաստան ՓՄՁ Հիմնադրամ Հատուկ Սահմանափակ Ընկերություն | ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 10 | 234,376 | 35.000037 |
| Հակոբյան Արմեն Իշխանի | ՀՀ, ք. Երևան, Ալիխանյան 10 | 95,554 | 14.269352 |
| Հակոբյան Դավիթ Արմենի | ՀՀ, ք. Երևան, Խաչատրյան 31-53 | 95,552 | 14.269053 |
| Բրդոտյան Հովսեփ Հակոբի | ՀՀ, ք. Երևան, Թումանյան 39 շ□ բն 7 | 62,530 | 9.337783 |
| Բրդոտյան Հակոբ Հովսեփի | ՀՀ, ք. Երևան, Թումանյան 39 շ□ բն 7 | 62,530 | 9.337783 |
| Հակոբյան Հասմիկ Իշխանի | ՀՀ, ք. Երևան, Ավետ Ավետիսյան տուն 16 | 59,552 | 8.89307 |
| Բոյախչյան Վահե Գագիկի | ՀՀ, ք. Երևան, Ավետ Ավետիսյան տուն 16 | 59,551 | 8.892921 |